

Գուրգեն Հովնան

Ն. Գ. ԶԵՐՆԻՇԵՎՍԿՈՒ ԿԱՊԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԵՏ,
19-ՐԴ ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ*

Ն. Գ. Զերնիշևսկին 19-րդ դարի ռուս հասարակական-քաղաքական մտքի ամենապայծառ դեմքերից մեկն է։ Նա հսկայական ազդեցություն է գործել Ռուսաստանի ռեուլյուցիոն շարժման, ռուս հասարակական առաջավոր մտքի, ռուսական հոյակապ կուլտուրայի զարգացման վրա։ Զերնիշևսկին տիրաբար իշխել է Ռուսաստանի ռեուլյուցիոն երիտասարդության մտքին, իր աննկուն, եռուն գործունեությամբ, իր հանճարեղ ստեղծագործություններով խորապես ցնցել է ճորտատիրական Ռուսաստանը և գյուղացիական լայն մասսաներին ոտքի հանել ընդդեմ ինքնակալական դաժան կարգերի։

Ռուսաստանի հասարակական կյանքի վրա Զերնիշևսկու ունեցած ազդեցությունը հանճարեղ կերպով բացահայտել է Վլադիմիր Իլյիչ Լենինը։ Ճնա կարողանում էր,— գրում է Լենինը,— իր դարաշրջանի բոլոր քաղաքական իրադարձությունների վրա ազդել ռեուլյուցիոն ոգով, անցկացնելով—գրաքննություն խոշորոտների ու արգելքների վրայով— գյուղացիական ռեուլյուցիայի գաղափարը, մասսաների պայքարի դաղափարը՝ բոլոր հին իշխանությունների տապալման համար»։

Զերնիշևսկու ազդեցությունը հավասարապես մեծ էր նաև Ռուսաստանի ժողովուրդների հասարակական կյանքի, ռեուլյուցիոն մտքի զարգացման վրա։ Ռուսաստանի փոքր ժողովուրդների առաջավոր գավակները, իրենց ժողովրդի ազատագրման սրբազան գործը կապում էին այն մեծ պայքարի հետ, որ ռուս ռեուլյուցիոն դեմոկրատները Զերնիշևսկու գլխավորությամբ մզում էին ցարական Ռուսաստանի բռնապետական կարգերի դեմ։

Զերնիշևսկին քաջ ծանոթ էր ռուս ժողովրդի, ինչպես և Ռուսաստանի մյուս ժողովուրդների ծանր վիճակին, ազգային ճնշման ու շահագործման այն խայտառակ քաղաքականությանը, որ վարում էր ցարական կառավարությունը։ Զերնիշևսկին Ռուսաստանի ճնշված ժողովուրդների իսկական բարեկամն էր։

Ղազախական լուսավորիչ-դեմոկրատ, նշանավոր գիտնական Չոկան Վալիխանովը, 60-ական թվականների սկզբներին, «Սոփրեմեննիկ»-ի խմբագրատան, Զերնիշևսկու հետ ունեցած զրույցի անմիջական տպավորության տակ գրել է. «Ինչպիսի՜ սքանչելի մարդ է այդ Զերնիշևսկին և ինչպե՜ս նա լավ գիտե ոչ միայն ռուսների կյանքը, այլև՝ մյուս ժողովուրդների։ Նրա հետ ունեցած զրույցից հետո ես վերջնականապես համոզվեցի, որ մենք առանց Ռուսաստանի կկորչենք, առանց ռուսների— դա նշանակում է մնալ առանց լուսա-

* Զեկույցված է 1953 թ. հուլիսի 23-ին, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի գիտական սեփականում, նվիրված Ն. Գ. Զերնիշևսկու ծննդյան 125-ամյակին։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 17, էջ 134։

վորություն, դեսպոտիզմի ու խավարի մեջ, առանց ռուսների—մենք միայն Ասիա ենք, ընդորո՞ւմ ուրիշ բան էլ չենք կարող լինել առանց Ռուսաստանի: Չերնիշևսկին—դա մեր բարեկամն է»¹:

Չ. Վալիխանովի այս վկայությունը բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում պարզելու համար Չերնիշևսկու վերաբերմունքը դեպի Ռուսաստանի ժողովուրդները: Ինչպես տեսնում ենք, Չերնիշևսկու հետ ունեցած հենց առաջին հանդիպումից հետո, Վալիխանովը վերջնականապես այն համոզման է գալիս, որ դաժախ ժողովրդի ճակատագիրը, նրա ազատագրումն ու կուլտուրական վերելքը կապված են Ռուսաստանի և նրա առաջավոր ուժերի պայքարի հետ: Վալիխանովի այդ խորապես ճշմարտացի համոզումը տարածվում է նաև Ռուսաստանի մյուս ժողովուրդների ճակատագրի վրա և Չերնիշևսկին, ոչ միայն դաժախական ժողովրդի բարեկամն էր, այլև Ռուսաստանի իրավազուրկ ու ճնշված բոլոր ժողովուրդների ազատագրական պայքարի ոգեշնչողն ու առաջնորդը:

Այդ իմաստով՝ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Չերնիշևսկու վերաբերմունքը դեպի Անդրկովկասի ժողովուրդները, այդ ժողովուրդների առաջավոր զավակների վրա ունեցած նրա հսկայական ազդեցությունը:

Թիֆլիսում հրատարակված «Новое обозрение» թերթի խմբագիր Գ. Թումանովը վկայում է, որ կովկասյան երիտասարդությունը, հատկապես Պետերբուրգի համալսարանում սովորող երիտասարդությունը, խորապես կապված էր Չերնիշևսկու հետ և կրել է նրա խոշոր ազդեցությունը: Թումանովը գրում է. «Անցյալ դարի վաթսուհին թվականներին մտավոր կյանքի աշխուժացումը Ռուսաստանում առանձնապես բարերար ազդեցություն ունեցավ Պետերբուրգում ապրող կովկասցի ուսանողների վրա: Այդ ուսանողները ջերմորեն արձագանքեցին կյանքի այն նոր պահանջներին, որոնք ծագում էին առել այն ժամանակ ռուսական առաջավոր հասարակության խմբակներում: Կովկասցի ուսանողներն առանձնապես մոտիկացան Չերնիշևսկու և նրա ընտանիքի հետ»:

Կան և ուրիշ փաստեր, որոնք վկայում են, որ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ժողովուրդների լավագույն զավակները խորապես կապված են եղել Չերնիշևսկու ու նրա գլխավորած ռեուլյուցիոն շարժման հետ: Այսպես, օրինակ, «Մուրճ» ամսագրի խմբագիր, նշանավոր հայ հրապարակախոս Ավետիք Արասխանյանը, 80-ական թվականն իրին գրած, բայց ցենզուրայի կողմից արգելված իր հոդվածներից մեկում պարզ ու որոշակի նշում է, որ Չերնիշևսկու գլխավորած ռեուլյուցիոն շարժումը լայնորեն ընդգրկել է նաև կովկասյան երիտասարդությանը, իշխել է նրա առաջավոր մտքին, ոգեշնչել ու պայքարի է կոչել նրան: Արասխանյանը գրում է. «Չերնիշևսկու առաջացրած շարժումը Ռուսիայում կղզիացած չէր մի կենտրոնում, այլ ծավալված էր այդ մեծ երկրի հեռավոր տեղերը ևս: Կովկասյան երիտասարդությունը կրեց նույն ազդեցությունը, և բազմաթիվ պատանիներ Չերնիշևսկու գրվածքները երկրպագության պաշտամունք էին շինած»:

Արասխանյանի այս վկայությունը հաստատում ու ավելի ամրապնդում է այն միտքը, որ իրավ 60-ական թվականներին Ռուսաստանում եղել է ռեուլյուցիոն գաղտնի կադմակերպություն, որը մեծագույն հմտությամբ գլխավորել

¹ «Правда», 1952 թ. նոյեմբերի 18:

է Զերնիշևսկին և որի նպատակն է եղել տապալել ցարական կարգերը, հաստատել նոր հասարակարգ, ժողովուրդների ազատության ու անկախության հասարակարգ: Զերնիշևսկու ռեուլյուցիոն գործունեությանը նվիրված գիտական նոր հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ կազմակերպությունը յուր բավականին ծավալուն ու ամուր ճյուղերն է ունեցել նաև Անդրկովկասում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում: Զերնիշևսկու, Դոբրոլյուբովի ու Նեկրասովի խմբագրած «Սովրեմեննիկ»-ը 50—60-ական թվականներին բաժանորդներ է ունեցել Երևանում, էջմիածնում, Ալեքսանդրոպոլում, Կիրովականում, Դիլիջանում և այլն:

Բաբվում և Թիֆլիսում գտնվող հայ առաջավոր ինտելիգենցիան Վրաստանի և Ադրբեջանի լավագույն մարդկանց հետ միասին ոչ միայն կարդացել է «Սովրեմեննիկ»-ը, այլև ակտիվորեն տարածել նրա մեջ արժարժված ռեուլյուցիոն գաղափարները անդրկովկասյան բազմազգ աշխատավորության մեջ:

Հայ իրականության մեջ գործող այդ գաղտնի կազմակերպությունների աշխատանքը գլխավորել է Զերնիշևսկու մարտական զինակից Մ. Նալբանդյանը:

Զերնիշևսկու ձերբակալումն ու աքսորումը շթույացրին նրա ազդեցությունը Ռուսաստանի, ինչպես և Անդրկովկասի երիտասարդության վրա, ընդհանրապես այդ ազդեցությունն օրըստօրե է՝ սլվելի մեծանում էր մասսաների ռեուլյուցիոն շարժման զարգացման հետ միասին:

Հայտնի է, որ Զերնիշևսկու անունը խստիվ արգելված էր մամուլում և հրատարակային հանդեսներում հիշատակելը, արգելված էր նաև նրա հրկերի հրատարակությունը, նրա ստեղծագործություններից մեջբերումներ կատարելը, իսկ այդ բոլոր արգելքներով հանդերձ երիտասարդությունը դարձյալ շարունակում էր կարդալ նրա երկերը, տարածել դրանք և ամենուրեք բարձր պահել նրա անմահ անունը:

«Զերնիշևսկու աքսորումից հետո, — գրում է Թումանովը. — երկար ժամանակ նա հանդիսանում էր մատաղ սերնդի սիրելին Կովկասում, ինչպես և Ռուսաստանի մնացած վայրերում: Այն գիմնազիայում, ուր ես սովորում էի, անցյալ դարի 70-ական թվականներին, երբ աշակերտները սկսեցին գրական երկեր կուլթներ կազմակերպել, ապա ամենից առաջ կարդացին «Բնիշ անել» վեպը և Պիսարևի հոդվածն այդ վեպի մասին»:

Զերնիշևսկու ազդեցությունը կովկասյան երիտասարդության վրա, նրա իշխող հմայքը այդ երիտասարդության շրջանում, մասնակի կամ արտակարգ երկվյթ չի եղել: «Եվ դա ամենևին էլ ինչ որ բացառիկ երևույթ չէր, — գրում է Թումանովը, — այն լիովին ներդաշնակում էր այն ընդհանուր երկրպագման հետ, որով շրջապատված էր մեզնում Զերնիշևսկու անունը: Այդքան բարձր էր գնահատվում ռուսական մեծ հրապարակախոսը նույնիսկ Ռուսաստանի ամենահեռավոր անկյուններում: Եվ դա այն ժամանակ, երբ ռեակցիան նրան կտրել էր սուբոդջ աշխարհից և բանտարկության դատապարտել, որպես մի ինչ որ ծանր ոճրագործի»:

Որքան էլ ցարական սև ցենզուրան ամենախստիվ միջոցների էր դիմում Զերնիշևսկու նկատմամբ, նրա անվան ու գրական ժառանգության արգելման ուղղությամբ, այնուամենայնիվ, զանազան գաղտնի մեջոցներով նրա անունը թափանցում էր մամուլի էջերը: Այսպես, նրա համախոհները և հետևորդները մեջբերումներ կատարելով նրա գրվածքներից, նշում էին՝ «Դոբրոլյան շրջանի սուր պրականության սուրվագծերի» հեղինակը, «Արվեստի հարաբերությունը

դեպի իրականությունը՝ աշխատության հեղինակը, «Միլի կոմենտարներ»-ի նշանավոր հեղինակը և այլն: Բայց ամենքն էլ գիտեին, որ այդ աշխատությունների հեղինակը Չերնիշևսկին էր, որ խոսքը Չերնիշևսկու մասին էր:

Նմանօրինակ փաստերի մենք հանդիպում ենք նաև հայ մամուլի էջերում: «Մշակ» թերթը 1878 թվականի հունվարի սկզբներին մի ընդարձակ հոդված է տպագրում Նեկրասովի մահվան առթիվ: Հոդվածագիրն օգտագործելով առիթը, նշում է այն խոշոր դերը, որ կատարել է Չերնիշևսկին Նեկրասովի «Սովրեմեննիկ»-ում և որ Բելինսկու մահից հետո «Սովրեմեննիկ»-ին կենդանություն ու լայն մասսայականություն բերողը Չերնիշևսկին էր: «Բելինսկու մահից հետո, — կարդում ենք այդ հոդվածում, — մինչև 1856 թվականը Նեկրասովի օրագիրը համարյա ընկնում է, բայց այդ միջոցին նա մի նոր տաղանդավոր աշխատակից է ձեռք բերում, որը պակաս չէր Բելինսկուց: «Արվեստի փառքեր»-ում դեպի իրականությունը՝ անունով բանականության հոդվածը, որը գրական շարժողության հիմք եղավ, Նեկրասովի ուշադրությունը նրա հեղինակի վրա դարձրեց: Նրա օրագիրը նորից սկսում է պայծառ քայլերով առաջ երթալ մինչև 1862 թիվը»¹:

Աքսորից ավելի քան քսան տարի հետո Չերնիշևսկին դարձյալ շարունակում էր իշխել ու հուզել երիտասարդության միտքը, ոգեշնչել նրան պայքարի ցարական դեսպոտիզմի, խավարի ու ճնշման դեմ: Չերնիշևսկու երկերը, ինչպես 60-ական, նույնպես և 70—80-ական թվականներին, շարունակում էին իրենց խոշոր ազդեցությունը էպոխայի առաջավոր մտքի զարգացման վրա, շարունակում էին դաստիարակել ռևոլյուցիոն երիտասարդության այն հոյակապ պլենադան, որը հիմք դրեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի բանավորական պայտիային: Այդ պլենադան թե՛ Ռուսաստանում, թե՛ Կովկասում, թե՛ արտասահմանում արթուն կերպով հետևում էր մեծ ռևոլյուցիոնների ու մտածողի ճակատագրին, նրա կյանքին վերաբերող ամեն մի, անգամ փոքր իրադարձության:

* * *

Ավելի քան քսան տարի ցրտաշունչ Սիբիրի խորքերում պահելուց հետո Ալեքսանդր 3-րդ ցարը, ի վերջո, մեծ դժվարությամբ համաձայնվում է «հարգել» Չերնիշևսկու զավակների խնդիրքը, նրան տեղափոխելու Ռուսաստանի հեռավոր քաղաքներից մեկը: Որոշվում է նրան տեղափոխել Աստրախան, Ճանապարհին երկար տանջվելուց հետո, ոստիկանության հատուկ հսկողությամբ 1883 թվականի հոկտեմբերի 27-ին Չերնիշևսկին գալիս է Աստրախան: Ցարական ցենզուրան արգելել էր մամուլում գրելու Չերնիշևսկուն Սիրիից Աստրախան տեղափոխելու մասին: Բայց դարձյալ մի քանի թերթեր իրենց առօրյա լուրերի շարքում նշում են Չերնիշևսկու Սիբիրից Աստրախան գալու մասին:

Հայ մամուլի էջերում նույնպես արձագանք գտավ Չերնիշևսկու Աստրախան գալու լուրը. այսպես, օրինակ, «Մշակ» թերթը 1883 թվականի նոյեմբերի 9-ի համարում հաղորդում է, որ «Ռուս հայտնի գրող Չերնիշևսկին, «Что делать?» ումանի հեղինակը, վերադարձած է Սիբիրից, որտեղ նա ապրում էր

¹ «Մշակ», 1878 թ., № 2:

քսան տարի շարունակ, այնտեղ աքսորված լինելով և այժմ ապրում է Աստրախան քաղաքում: Չերնիշևսկու առողջությունն ինչպես վկայում են լրագրերը, բավականացուցիչ է¹:

Աստրախանում սկսվում է ռուս մեծ հանճարի կյանքի մի նոր շրջան: Ուստիկանական հսկողությունն ամենայն խստությամբ շարունակվում է Չերնիշևսկու նկատմամբ: Ինքը Չերնիշևսկին շատ լավ գիտեր, որ ուստիկանությունը դարձյալ ստվերի պես հետևում է իրեն և դրա համար էլ Աստրախանում նա խիստ սահմանափակում է իր ծանոթների թիվը:

Բայց ուրքան էլ նեղ լինե՞ր Չերնիշևսկու Աստրախանի ծանոթների ու բարեկամների թիվը, այնուամենայնիվ նա ուներ իր շրջանը, ծանոթները, բարեկամներն ու երկրպագուները:

Աստրախանի ժամանակաշրջանի Չերնիշևսկու կյանքի ու գործունեության մասին կա բավական գրականություն: Այդ գրականության մեջ հանգամանորեն պարզաբանվում է Չերնիշևսկու կապը ռուս առաջավոր ինտելիգենցիայի հետ, նրա այդ շրջանի գիտական նոր աշխատությունների հսկայական նշանակությունը ռուս հասարակական մտքի զարգացման գործում, նրա բացահայտ ու գաղտնի հանդիպումները ռուս գրողների, հրապարակախոսների, մամուլի ու հրատարակչական հիմնարկների գործիչների հետ և այլն:

Ուստի մեր զեկուցման մեջ հասկանալի պատճառներով մենք անդրադառնում ենք Աստրախանի շրջանի Չերնիշևսկու միայն հայկական կապերին: Փաստերը ցույց են տալիս, որ Չերնիշևսկու Աստրախանի շրջանի, այսինքն նրա կյանքի վերջին վեց տարիների ծանոթների ու բարեկամների զգալի մասը հայեր են եղել, որոնք Չերնիշևսկուն՝ նրա Աստրախան գալու հենց առաջին օրերից բարոյական և նյութական հսկայական օգնություն են ցույց տվել:

Նշենք մի քանի կարևոր վկայություններ այդ մասին:

Չերնիշևսկու քարտուղարը՝ Կոնստանտին Միխայլովիչ Ֆեոդորովն իր նամակներից մեկում հետևյալն է գրում Չերնիշևսկու և Աստրախանի հայերի հարաբերության մասին. «Իմ հիշողություններում,— գրում է Ֆեոդորովը,— ես ընդգծում եմ, որ այն մարդիկ, որոնք առաջինը եկան ու բարոյական ու մասամբ դրամական օգնություն ցույց տվին բազմաշարժար Չերնիշևսկուն և նրա ընտանիքին, որը հուսահատության էր հասել դրամի ապարդյուն որոնումների մեջ, նրա Աստրախան գալու առաջին ամիսներին, որտեղ նա շունչ էր բերել կամենք, ոչ ծանոթներ — ապա դրանք Աստրախանի հայերն էին»:

Այս փաստն ավելի նշանակալից է դառնում, երբ այն դիտում ենք նմանօրինակ մյուս փաստերի շարքում:

1883 թվականին գալով Աստրախան, Չերնիշևսկին իջնում է հայկական մի ընտանիքում, իսկ մի որոշ ժամանակից հետո նա վարձում է ամբողջ բնակարանը: Դա քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում գտնվող — Խաչիկյանների բնակարանն էր: 1883 թվականին, իր զավակներից մեկին ուղղած նամակում, Չերնիշևսկին այդ բնակարանի և նրա հարմարությունների մասին հետևյալն է գրում. — «Քո մայրը վարձել է մեր տան տիրոջ (Խաչիկովի) այն տունը, որի պատուհանները նայում են փողոցի վրա, այդ տան կողքին գտնվում էր այն բնակարանը, որ մենք ապրում էինք ձեր այստեղ եղած ժամանակ: Այդ տունը միանգամայն առանձին մի շենք է, նա փողոց նայող 7 պա-

¹ «Մշակ», 1883 թ., № 171:

տուհան ունի և շատ սենյակներ. նրանք այնպես են դասավորված, որ ոչ միայն քո մայրը, ես և դու — ամենքս կունենանք առանձին սենյակներ, այլ կա նաև մի առանձին սենյակ ևս (չորրորդ առանձին) Միշայի համար (եթե նա գայ)»¹:

Քաղաքի այն թաղամասում, որտեղ ապրում էր Չերնիշևսկին, համարյա ամբողջովին հայեր էին բնակվում: Այդ հանգամանքը հնարավորություն տվեց Չերնիշևսկուն մոտիկից ծանոթանալու հայերի կյանքին, կենցաղի առանձնահատկություններին և այլն:

Աստրախանում ապրած ժամանակաշրջանում Չերնիշևսկին փոխել է հինգ բնակարան, որոնցից չորսը հայերի բնակարաններ են եղել:

Դեռևս Սարատովի գիմնազիայում սովորելու տարիներին Չերնիշևսկին հետաքրքրվել է արևելյան ժողովուրդների պատմությամբ ու կուլտուրայով: Նրա ուսումնասիրած մեծաքանակ պատմական աղբյուրների մեջ բազմաթիվ հիշատակություններ կան հայերի մասին, այնպես որ նա բավականին տեղեկություններ ուներ Հայաստանի ու հայերի մասին, երբ եկավ Աստրախան: Այստեղ նա բազմակողմանիորեն խորացրեց իր գիտելիքները հայերի մասին, դեռ ավելին. նա ուսումնասիրում է հայերեն լեզուն, դժվարությամբ, բայց և այնպես իր հայ ծանոթների հետ խոսում է հայերեն: Ծանոթանալով Աստրախանի մի քանի հայ ընտանիքների հետ, դրանց միջոցով Չերնիշևսկին բավականին տեղեկություններ է քաղում հայերի պատմական անցյալի ու ներկայի մասին: Այդ հայ ծանոթների թվում Չերնիշևսկին առանձնապես մտերիմ հարաբերություններ է հաստատում Մելքումովների, Խաչատուրովների, ինչպես և Ավետովների ընտանիքների հետ:

Չերնիշևսկու Աստրախանի շրջանի ծանոթներից մեկը, Պ. Լ. Յուդինը, իր հուշերում պատմում է, որ Չերնիշևսկին Աստրախանի իր հայ ծանոթների միջոցով նյութեր էր հավաքում հայ ժողովրդի պատմության ու կուլտուրայի մասին, որ նա ծրագրել էր սովորել հայոց լեզուն և որ նա արդեն գիտեր հայկական այբուբենը և խոսում էր հայերեն: Յուդինը գրում է. «Իհկույայ Գավրիլովիչը որոշ համակրանքն էր վայելում վաճառական Ավետովը (հայ), որին և այցելում էր ինքը ճաշից հետո, այն նպատակով, որ նրանից տեղեկություններ իմանա հայերի կյանքի, նրանց պատմության ու առևտրի մասին. նա նույնիսկ մտադիր էր սովորել հայերեն լեզուն: Համենայն դեպս, Աստրախանում նիկուլայ Գավրիլովիչը գիտեր հայկական այբուբենը և մի քանի հայկական խոսքեր»:

Այսպիսով մոտավորապես կես դար առաջ ողուսական մամուլը վկայում է, որ Չերնիշևսկին գիտեր հայկական այբուբենը, գիտեր հայկական բառեր: Ուրիշ աղբյուրներ վկայում են, որ ապրելով Աստրախանի հայկական ընտանիքներում, շփվելով հայերի հետ, Չերնիշևսկին հետագայում խոսում էր հայերեն և կարողում հայկական գրքեր:

Հանրահայտ է, որ Չերնիշևսկին տիրապետում էր բազմաթիվ լեզուների, գրում ու կարդում էր այդ լեզուներով. ակամա հարց է առաջանում, ապա փնջանհրաժեշտություն էր Չերնիշևսկու համար, իր բավականին պատկառելի տարիքում, սովորել նաև հայերեն:

¹ Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, том XV, Москва, 1950, стр. 423.

² «Исторический Вестник», 1906, № 1.

Իհարկե դա սոսկ հաճույքի համար չէր:

Չերնիշևսկին Ռուսաստանի ռեզյուցիոն շարժման պարագլուխը հանդիսանալով, բնականորեն պետք էր մեծ պահանջ դնար մոտիկից ու անձամբ ծանոթ լինել Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների կյանքին, նրանց կուլտուրային ու պատմության, նրանց ազգային ազատագրական պայքարին: Նա գիտեր սլավոն ժողովուրդների լեզուները. Սարատովի տարիներին և հետագայում նա ուսումնասիրել է արևելյան ժողովուրդների լեզուները՝ թաթարերեն, պարսկերեն, արաբերեն և այլն: Չերնիշևսկուն հայտնի էր, որ հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն է, որ նա ունի դարերի պատմություն, հարուստ կուլտուրա, որ պատմական ճակատագիրը նրան հարկադրել է ցրվելու աշխարհով մեկ և հենց Աստրախանի հայկական գաղութը 80-ական թվականներին բավականին շատ նյութ կարող էր տալ կովկասյան և արևելյան ժողովուրդների կյանքն ու պատմությունն ուսումնասիրելու տեսակետից:

80-ական թվականներին Աստրախանում կային բավականին հարուստ գրադարաններ, որտեղ կար մեծ քանակությամբ հայ գրականություն ու Հայաստանին վերաբերող այլ լեզուներով գրականություն: Այդ գրականության հետ Չերնիշևսկին հանգամանորեն ծանոթանում է ուսումնասիրելով Կովկասի և Հայաստանի պատմական անցյալը, նրա տնտեսական ու քաղաքական վիճակը:

Այդ տեսակետից ուշագրավ է Աստրախանի արական գիմնազիայի դասախոս Կ. Ն. Մալինովսկու հուշերը Չերնիշևսկու մասին, որ իր հոգիածներից մեկում մեջ է բերում Պ. Լ. Յուդինը: Անդրադառնալով Չերնիշևսկու վերաբերմունքին դեպի արևելք, դեպի Անդրկովկասը և Հայաստանը Պ. Լ. Յուդինը գրում է. «Նա շատ էր հետաքրքրվում այդ ավելի ասիական, քան եվրոպական երկրամասով: Աստրախանի արական գիմնազիայի նախկին դասախոս Կ. Ն. Մալինովսկին պատմել է ինձ թե ինչպես Ն. Չերնիշևսկին խնդրել է նրան թույլ տալ իրեն նայելու գիմնազիայի գրադարանը, որտեղ կային արժեքավոր դիտական շատ երկեր գերմաներեն, ֆրանսերեն, լատիներեն և արևելյան լեզուներով՝ պարսկերեն, թաթարերեն, արաբերեն և հայերեն, որոնք մեծ մասամբ նվիրել էին տեղի առևտրականները, որովհետև մինչև 19-րդ դարի առաջին կեսը գիմնազիայում դասավանդում էին այդ լեզուները: Ավելի շատ Չերնիշևսկուն հետաքրքրում էին Հռոմի և Արևելքի հնությունները:

— Այդ ժամանակ, — ասում է Մալինովսկին, — գրադարանի վարիչը ես էի և ինձ համար մեծ բավականություն էր ցույց տալ գրադարանն այդպիսի մեծ մարդուն, իսկ հետո ընդունել նրան ինձ մոտ... Իհարկե, ես սիրով տվեցի նրան տուն տանելու իր բնտրած գրքերը, որոնք նա վերադարձնում էր արտակարգ ճշտապահությամբ¹:

Չերնիշևսկու բարեկամներն ու ազգականները նույնպես կապված էին Հայաստանի հետ և Հայաստանի ու նրա պատմական հնությունների մասին բազմաթիվ լուրեր էին հաղորդում նրան: Այսպես, օրինակ, Յու. Պիպինյան Չերնիշևսկուն ու նրա կնոջն ուղղած 1867 թվականի հուլիսի 5-ի նամակում գրում է Հայաստանի մասին. «Ֆեոդոր Գուստավովիչը կատարում է մեծ ու չափազանց հետաքրքիր ճանապարհորդություն Հայաստանում, այսօր ես նրանից նամակ ստացա ինչ որ Գեղարդից, հավանորեն մի բավականին խուլ անկյու-

¹ „Исторический Вестник“. 1906, № 1.

նից, որտեղ նա սակայն իր համար հետաքրքիր շատ բան է գտել: Նա այնտեղ գննել է հնադարյան մի վանք, ժայռի մեջ փորված, հինավուրց հետաքրքիր զարդերով: Ծիշտն ասած մենք որոշ անհամբերությամբ ենք սպասում, մինչև որ նա ավարտի իր այնտեղի աշխատանքները, կլիման չափազանց ծանր է և աշխատանքն էլ հոգնեցուցիչ, թեկուզ նա ամենը լավ է տանում, ինչպես տեղացի մի բնակիչ: Այնուհետև դեռ նա պիտի լինի նաև էջմիածնում, որտեղ նույնպես քիչ աշխատանք չկա կատարելու»:

Ֆեոդոր Գուստավովիչ Բերնշտամը նկարիչ, ճարտարապետ և արխեոլոգ էր: 1887 թվականին նա գալիս է Հայաստան և մեծ ոգևորությամբ ուսումնասիրում է Հայաստանի հնությունները, պատմական հուշարձանները: Իր այդ ուսումնասիրությունները նա հրատարակում է և ռուսական մամուլը գովասանական հոդվածներ է տպագրում դրանց մասին: Այդ հոդվածներից մեկի առթիվ Ա. Ն. Պիպինին ուղղած նամակում 1887 թվականի սեպտեմբերի 26-ին Չերնիշևսկին գրում է. «Մի քանի օր առաջ «Ռուսկիե Վեդոմոստի»-ում կարդացի գովասանական գնահատական Ֆեոդոր Գուստավովիչի արխեոլոգիական աշխատանքների մասին: Այդ ինձ ուրախացրեց»:

Չերնիշևսկու այս տողերը ցույց են տալիս, որ նա հետևում և լավ ծանոթ էր Ֆեոդոր Գուստավովիչ Բերնշտամի Հայաստանի պատմական հուշարձանների ուսումնասիրությանը նվիրված աշխատություններին:

Մենք նշեցինք, որ Աստրախանի հայերը ջերմ ընդունելություն ցույց տվին Չերնիշևսկուն և նրա ընտանիքին նրանց Աստրախան գալու հենց առաջին օրվանից: Այդ լավ վերաբերմունքի հասարակական ու բարոյական հսկայական նշանակությունը ճիշտ ըմբռնելու համար պետք է վերհիշել, որ 80-ական թվականների ռեակցիայի ծանրագույն տարիներն էին, որ ահաբեկված քաղքենի ինտելիգենցիան ամենուրեք խույս էր տալիս Սիբիրից վերադարձած մեծահույակ ռուսացիներից: Մեկուսացման այդ ծանր պայմաններում Չերնիշևսկին խորապես զգացված էր հայերի անշահախնդիր վերաբերմունքից: Աստրախանի տարիների նամակներում Չերնիշևսկին բազմիցս գոհունակությամբ հիշատակում է հայերի այդ լավ վերաբերմունքի մասին, հատկապես Սերգեյ Ստեփանովիչ Ավետովի մասին: Այսպես, օրինակ՝ 1886 թվականին իր կնոջ՝ Օլգա Սոկրատովնային ուղղած նամակում Չերնիշևսկին գրում է. «Եկավ իմ բարեկամ Ավետովը և պահանջեց, որ գնանք միասին կառքով զբոսնենք: Ես հազա վերադառնալու և գնացի: Կես ժամից նա տարավ այն մեծ հրապարակով, որն ընկնում է Արկադիայի և այգու միջև»:

Մի այլ նամակում Չերնիշևսկին նորից հիշատակում է Ավետովի հետ ունեցած միացյալ զբոսանքի մասին:

Ոստիկանական ագենտը, որը հետևում էր Չերնիշևսկու ամեն մի քայլին, իսկույն զեկուցում է այդ մասին ոստիկանության վարչության, որ «17-ին հուլիսի վաճառական Ավետովը եկավ Չերնիշևսկու մոտ, նրա հետ միասին Չերնիշևսկին կառքով զբոսնում էր փողոցներում, Ավետովը նրան ծանոթացնում էր փողոցների և մի քանի տների և նրանց տերերի մասին»²:

1888 թվականի հուլիսի 20-ին կնոջն ուղղած նամակում Չերնիշևսկին գրում է. «Ահա քեզ նորություն: Երեկ Ավետովի քույրերը մարդ էին ուղարկել, հրավիրելու ինձ իրենց մոտ: Գնում եմ, նրանք խանդավառությամբ ասում են

¹ Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, том XV, стр. 577.

² „Голос минувшего“, 1917 г., № 7—8.

«Նղբայրս մեզ նամակ է գրել և նույնիսկ, ոչ երկու, երեք խոսք, այլ շատ տողեր և մտքերը շարադրում է կարգին, բառերը գրված են առանց սխալի (հայերեն, անկասկած)։ Ուրախացա և ես նրանց հետ, ուրախացիր և դու, որովհետև նա իսկապես սիրում էր ինձ և հարգում քեզ»¹։

Չերնիշևսկու նամակներում հիշատակություններ կան, որ նա Ավետովին նամակներ է գրել, բայց այդ նամակները չկան հրապարակի վրա, հավանորեն կորել են, որովհետև մեր բոլոր որոնումներն այդ ուղղությամբ ապարդյուն անցան։ Իր՝ Չերնիշևսկու արխիվում պահպանվել է միայն Ավետովի մի փոքրիկ նամակը, որով նա Չերնիշևսկուն հրավիրում է թեյի իր ծանոթներից մեկի մոտ։

Սարատովի Չերնիշևսկու անվան Տուն-Թանգարանում պահպանվել է Աստրախանում Չերնիշևսկու թարգմանած Վեբերի բազմահատոր «Ընդհանուր պատմության» մի հատորը, որ Չերնիշևսկին նվիրել է Ավետովին ուսերեն ու հայերեն մակագրությամբ։

Բացի Ավետովներից Չերնիշևսկու ընտանիքի մոտիկ բարեկամներն ու ծանոթներն էին Աստրախանում՝ Մելքոմովները, Խաչատուրովները, Խաչիկովները և շատ ուրիշ հայ ընտանիքներ։

Չերնիշևսկուն հետևող ոստիկանական ագենտների տվյալներն ի մի գումարելով Աստրախանի ոստիկանությունը 1885 թվականի մայիսի 9-ի զեկուցագրի մեջ նշում է, թե ովքեր են Չերնիշևսկուն շրջապատող մարդիկ։ Դրանք են՝ Բ. Ն. Սուբիազովը, Ս. Ավետովը, Ռախմանովը, Մարտիրոսովը, Աբլարովը, Մելքոմովները և բժիշկ Ս. Մ. Պոպովը։ Ինչպես տեսնում ենք ճշշող մեծամասնությունը հայեր են։ Չերնիշևսկու մասին եղած հատուկ ուսումնասիրությունների մեջ նշվում է, որ շնայած վերոհիշյալ մարդիկ ակտիվորեն կապված չէին քաղաքական կյանքի հետ, բայց նրանք մեծ համակրանքով էին վերաբերվում դեպի Չերնիշևսկին ու նրա գաղափարները։

Ոստիկանության զեկուցագրում հիշատակված վերոհիշյալ հայերը, ինչպես ասացինք, առևտրական կապերով կապված էին բազմաթիվ վայրերի հետ, Մոսկվայի, Պետերբուրգի, Կազանի, Ռոստովի, Բաքվի, Թիֆլիսի, ինչպես և Իրանի, Թյուրքիայի, Հնդկաստանի և այլ հեռավոր վայրերի հետ։ Շփվելով ու զրուցելով նրանց հետ Չերնիշևսկին նրանց համար աննկատելի ձևով հսկայական տեղեկություններ է քաղել նաև այդ երկրների ու քաղաքների տնտեսական կյանքի ու քաղաքական իրադարձությունների մասին։

Չերնիշևսկու և Աստրախանի նրա հայ բարեկամների հարաբերության վերաբերյալ պահպանվել են բազմաթիվ ուղագրավ փաստեր, նշենք մի օրինակ։

1884 թվականին Չերնիշևսկին ապրել է Ջանումովների տանը։ Դա բավականին մեծ հայկական մի ընտանիք էր։ Տան տերը՝ Ստեփան Ջանումովը մահանում է թողնելով 12 որդե երեխաներ։ Չերնիշևսկին վարձելով հինգ սենյականոց նրանց բնակարանը, հանգստի ժամերին սիրով զբաղվում է երեխաներով, զրուցում ու հետաքրքիր պատմություններ է պատմում նրանց։ Երեխաներն իրենց հերթին սիրում ու շափազանց մոտ են զգում իրենց Նիկոլայ Գավրիլովիչին։ Չերնիշևսկու անվան Տուն-Թանգարանում պահպանվել է Իվան Ստեփանովիչ Ջանումովի հուշերը Չերնիշևսկու մասին։ Այդ հուշերում կա այսպիսի ուղագրավ մի պատմություն։ «Գիմնազիայում սովորող քույրս, Վե-

¹ Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, том XV, Москва, 1950, стр. 712.

րոշկան,— գրում է Իվան Զանուժովը,— երկար ժամանակ չէր կարողանում գրել շարադրություն՝ «Գոգուլի նշանակությունը ուսման գրականության մեջ» խնամալով Վերջապես, հուսահատված, նա որոշեց դիմել Չերնիշևսկուն, խընդրելով օգնություն ցույց տալ իրեն։ Նիկոլայ Դավրիժովիչը հրաժարվում էր գրել, բայց և այնպես զիջեց։ Վերան արտագրեց Չերնիշևսկու գրած շարադրությունը։ Ուսուցիչը, Տուբերգովը, աշակերտուհիներին վերադարձնելով տետրերը, դրանցից մեկը թողեց իր մոտ, բաց անելով այն, հայտնեց, որ դա Զանուժովայի տետրն է։ Այնուհետև նա սկսեց շարադրությունը կարդալ բարձրաձայն և գովաբանել այն։ Վերոշկան փայլում էր գոհունակությունից։ Տետրում ուսուցիչը գրել էր. բովանդակության և շարադրելու համար հեղինակին 12, անթիվ պլյուսներով, արտագրողին՝ 1:

Վշտացած Վերոշկան, արցունքներն աչքերին, վազեց Նիկոլայ Դավրիժովիչի մոտ։ Չերնիշևսկին սկսեց ներողություն խնդրել անընթեռնելի ձեռագրի համար։

* * *

Մեզ հասած տեղեկությունների մի զգալի մասը վերաբերում է Չերնիշևսկու կապերին՝ Աստրախանի հայ հարուստ ընտանիքների հետ։ Չերնիշևսկին գիտակցորեն ընտրել էր հատկապես այդ ընտանիքները, որովհետև ցարական կառավարության աչքում այդ շրջապատը քիչ ավելի կասկածելի էր և Չերնիշևսկին այնտեղ անհամեմատ ավելի հանդիստ էր զգում իրեն, քանի որ լրտեսներու ու հետապնդելու առիթներն ավելի նվազ էին, քան ուրիշ պայմաններում։ Անկասկած դա չի նշանակում, թե Չերնիշևսկին կապված չէր Աստրախանի դեմոկրատական տրամադրություններով տոգորված հայկական շրջանների հետ։ Լինելով նշանավոր կոնսպիրատիվ ռևոլյուցիոներ, Չերնիշևսկին վարպետորեն քողարկել էր ոստիկանության աչքից իր կապերը դեմոկրատական շրջանների հետ։ Առանձին փաստերը վկայում են, որ այդ տարիներին Չերնիշևսկու անունը տարբեր օղակներով ոչ միայն կապվում էր Աստրախանի հայ դեմոկրատական շրջանների հետ, այլև Նույնիսկ հեռու Կովկասում ապրող հայ դեմոկրատ գրողների հետ։

Այսպես, օրինակ՝ հայ նշանավոր գրող Ղազարոս Աղայանի աշակերտներից մեկը 1885 թվականի հունվարի 31-ին Աստրախանից գրում է Աղայանին «Ձեզ արդեն հայտնի է, որ ոռոսաց երևելի գրողներից մեկը՝ Չ.....սկին այստեղ է։ Այդ անգութները դորան այստեղ էլ հանգիստ չեն տալիս. նշանակված է մի առանձին անձնավորություն, որը միշտ հետևում է դորան՝ թե ուր է գնում, ինչ էլ ասում, ում հետ է խոսում և այլն, մի խոսքով, նորա մամեն մի քայլը դիտում են։ Այդ իրեն հայտնի է։ Առողջության կողմից բավականին լավ է. ձայնը թույլ է»։

Այս տողերը ցույց են տալիս, որ Ղազարոս Աղայանը գիտեր Չերնիշևսկուն, ծանոթ էր նրա երկերին, որովհետև նամակի հեղինակն առանց խոսելու Չերնիշևսկու ով լինելու մասին, անմիջապես անցնում է նրա վիճակին և այնպիսի ձևով է պատմում, որ նախապես գիտե, թե այն բոլորն ինչ նա գրում է Չերնիշևսկու մասին, խիստ հետաքրքրում են Աղայանին։ Այո, պատահական չէ, որ Չերնիշևսկու կյանքի, նրա վիճակի մասին տեղեկություններ են հաղորդում հենց Ղազարոս Աղայանին։ Անցյալ դարի 60-ական թվականներին, ուսումնական տարիներին Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի գոր-

ծունեության ամենաեռուն շրջանում Աղայանն ապրել է Մոսկվայում ու Պետերբուրգում ու խորապես կրել է նրանց իդեական ազդեցությունը։ Աղայանի դեմոկրատական հայացքները, նրա սերը դեպի ժողովուրդը, ժողովրդի ծանր վիճակի պատկերումը նրա բանաստեղծություններում ու արձակ երկերում, նրա համակրանքը ժողովրդի ազատագրման գործին, այս բոլորը պայմանավորված են այն ազդեցությամբ, որ թողել են նրա վրա ռուս ռևոլյուցիոն դեմոկրատները՝ Չերնիշևսկու դիսավորությամբ։ Եվ վերջապես Աղայանի անսահման սերը դեպի ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների մարտական զինակից Միքայել Նալբանդյանը, լիովին համոզում են մեզ, որ ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների քարոզած իդեաները խորապես հուզել են նրան և անջնջելի հետք թողել նրա գրական, մանկավարժական գործունեության վրա։

Հայ առաջավոր գրողները սիրել, հետևել ու միշտ բարձր են գնահատել Չերնիշևսկուն, նրանք պաղտնի կերպով կարդացել են նրա արգելված երկերը, տարածել դրանք։ Հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը իր հուշերում պատմում է, որ 80-ական թվականներին ընկնելով Բաքվի նավթաշխարհը և կատարելով սևագործ բանվորի ծանր աշխատանքները, ազատ ժամերին, իր ընկերների հետ միասին կարդում էր արգելված գրականություն։ Հակոբյանը գրում է. «Արգելված գրքերից մեծ ազահությամբ կարդում էի Չերնիշևսկի, Դոբրոլյուբով և այլ գաղտնի գրքեր, որ ամառը բերում էին Ռուսաստանից»¹։

Ինչ խոսք, որ ապագա ռևոլյուցիոն մեծ պոետի աշխարհայացքի ձևավորման գործում հսկայական ազդեցություն են ունեցել Չերնիշևսկին և նրա մարտական զինակիցները՝ Դոբրոլյուբովը, Նեկրասովը, Նալբանդյանը և մյուսները։

Դեռևս անցյալ դարի երկրորդ կեսին Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպը հայ երիտասարդության ամենասիրված գրքերից մեկն է եղել։ Ռախմետովի հուժկու կերպարը հուզել ու ոգեշնչել է այդ երիտասարդության, իշխել է նրա մտքերին ու երազանքներին։ Իզուր չէ, որ նրանք կյանքում որոնել են այդպիսի ուժեղ ու համարձակ մարդկանց։

Թիֆլիսի գիմնազիայի նախկին ուսանող Սարգիս Վարդանյանն իր հուշերում անդրադառնալով 1891 թվականին Թիֆլիսում, Մաքսիմ Գորկու հետ ունեցած իր հանդիպման, նշում է, որ հենց առաջին հայացքից Գորկին իր արտաքինով, քայլվածքով, համարձակությամբ հիշեցրել է նրան Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի հերոս Ռախմետովի հուժկու կերպարը։ Հաջողությամբ անտեսելով ցենզուրական խտությունները, Վարդանյանը, ավելի քան կես դար առաջ տպագրած իր այդ հուշերում գրում է. «Այդ մի բարձրահասակ, լայնաթիկունք, ատլետիկ կազմվածքով, ռուսական լայն ու փոքր ինչ կոպիտ դեմքով ու երկար մաղերով մի երիտասարդ էր։ Գալիս էր նա հաստատուն ու վստահ քայլերով, կարծես զղում էր, որ ինքը հասարակ մի մահկանացու չէ։ Նա եկավ ու հասավ ինձ։ Ես ավելի լավ կարող էի դիտել նրան. նրա դեմքն ուրախ դեմքերից չէր, իսկ նրա խելացի ու մտասույզ աչքերն արտահայտում էին նրա ուժն ու մեծ կամքի առկայությունը։ Նրա ամբողջ հուժկու կազմվածքն ու բացառիկ դեմքն ակամայից գրավում էին բոլոր անցորդների ուշադրությունը։ Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպում այնպես հաջողությամբ ուրվագծված Ռախմետովի խորիմ կերպարանքն ուժեղ տպավորություն է թողել իմ վրա։ Եվ չգիտեմ ինչ-

¹ Հ. Հակոբյան, Երկեր, հայպետհրատ. 1951, էջ 334։

չու, երբ տեսա անժանոթ երիտասարդին, ինձ թվաց, թե իմ առջև կանգնած է հոգով հզոր և արտաքինով հուժկու Ռախմետովը»:

Բավականին ուշագրավ է այն հանգամանքը, որ հենց Դորկին է իր տեսքով ու էությունով հիշեցրել Ռախմետովի հոյակապ կերպարը: Այո, Գորկին այն նոր մարդկանց կենդանի մարմնացումն էր, որ Չերնիշևսկին երազում և այնպես հանճարեղորեն ու համարձակ պատկերել էր իր «Ի՞նչ տեսիլ» վեպում:

* * *

1889 թվականի հոկտեմբերի 29 (17)-ին Սարատովում մահանում է Նիկոլայ Գավրիլովիչ Չերնիշևսկին: Յարական կառավարությունը Չերնիշևսկու մահից հետո անգամ թույլ չի տալիս նրա անունը հիշատակելու մամուլի էջերում: Խստորեն արգելվում են բոլոր այն հոդվածները, որոնք գրվել էին նրա մահվան կապակցությամբ: Ռուսաստանի հարյուրավոր թերթերից միայն մի երկու թերթերի ներքին լուրերի բաժնում գրվում է, որ Սարատովում մահացել է ռուս գրող Չերնիշևսկին: Այդպիսի մի երկու տող թափանցում է նաև հայ մամուլի էջերը: «Մշակ» թերթի 1889 թվականի հոկտեմբերի 21-ի համարում կարդում ենք հետևյալ տողերը. «Երևելի ռուս գրող Նիկոլայ Չերնիշևսկին վախճանվեց: «Новое обозрение» լրագրին հեռագրում են Չերնիշևսկին վախճանվել է Սարատովում հոկտեմբերի 17-ին: Հանգուցյալ գրողը 65 տարեկան էր»:

Հայ պարբերական մամուլն իր ժամանակին փորձել է լայնորեն նշել ռուս առաջավոր մտքի այդ մեծ տիտանի մահը, բայց ցարական սև ցենզուրան ամենուրեք արգելել է Չերնիշևսկու մասին որևէ հոդված տպագրելու:

Կովկասյան ցենզուրական կոմիտեի արխիվում պահպանվել են Չերնիշևսկու մահվան առթիվ գրված բավականաչափ նյութեր, որոնք իր ժամանակին ցենզուրան արգելել է տպագրել հայ մամուլի էջերում: Այդ նյութերն ինքնին հետաքրքիր ու ուշագրավ են, որովհետև նրանց մեջ խոսվում է ռուս մեծ գրողի ու մտածողի կյանքի ու ստեղծագործությունների մասին, այն մեծ դերի մասին, որ ունեցել է Չերնիշևսկին ռուս հասարակական մտքի պատմության մեջ:

Այդ արգելված հոդվածների մեջ առանձին տեղ է գրավում նշանավոր հրապարակախոս Ավետիք Արասխանյանի հոդվածը Չերնիշևսկու կյանքի, նրա գրական գործունեության, ինչպես և քաղաքական ու տնտեսագիտական հարցերին վերաբերող Չերնիշևսկու հանճարեղ ուսումնասիրությունների մասին:

Արասխանյանի հոդվածը ցույց է տալիս, որ հայ առաջավոր ինտելիգենցիան բավականին լավ ծանոթ էր Չերնիշևսկու ստեղծագործություններին և բարձր է գնահատել այդ ստեղծագործությունների հսկայական դերն ու նշանակությունը Ռուսաստանի ժողովուրդների հասարակական մտքի ու ազդային ինքնագիտակցության արթնացման ու զարգացման գործում:

Իր այդ հոդվածի առաջին մասում Արասխանյանը նշում է երիտասարդության վրա Չերնիշևսկու ունեցած հսկայական ազդեցության մասին: Նա գրում է. «Որքան և որքան մտքեր հուզել են մի ժամանակ միմիայն նրա անունը լսելով: Չերնիշևսկին մեռավ, յուր անվան հետ կապելով երիտասարդական ժամանակի պատմությունը: Չերնիշևսկու անունը ամենահայտնի ու ամենաժողովրդական անուններից է, թեպետ և հազիվ գտնվի մի ուրիշը, որի անվան շուրջը կուտակված լինի այնքան ատելություն և թշնամություն»:

¹ «Մշակ», 1889 թ., № 120:

Արասխանյանն առաջին հրապարակախոսն էր, որ անցյալ դարի 80-ական թվականներին, հայ իրականության հետամնաց պայմաններում հանդես եկավ առանձին հողվածով, նվիրված Չերնիշևսկու կյանքին ու գրական գործունեության, նշեց նրա խոշոր դերը ռուս ժողովրդի գրականության, քննադատության ու տնտեսագիտական մտքի զարգացման գործում:

Վերը բերված փաստերն առաջին փորձն են դիտելու Չերնիշևսկու կյանքի ու գործունեության արտացոլումը հայ իրականության մեջ 70—80-ական թվականներին:

Ռուս հանճարեղ մտածողի ու բոցաշունչ ռևոլյուցիոնների նկատմամբ սովետական ժողովրդի անսահման սերը մեզնից պահանջում է նրա անվան հետ կապված ամեն մի փաստ բազմակողմանի ու խորը կերպով ուսումնասիրել, իմաստավորել ու լայնորեն նշել այն հսկայական դերն ու նշանակությունը, որ ունեցել է Չերնիշևսկին Ռուսաստանի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի հասարակական առաջավոր-ռևոլյուցիոն մտքի զարգացման գործում, ռևոլյուցիոն ուժերի կազմակերպման, դաստիարակման ու ցարական դժան կարգերի դեմ նրանց մեծ պայքարի կոչելու անմահ գործում: